ՀՀ ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ШИРАКСКИЙ ЦЕНТР АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ НАН РА
SHIRAK CENTER FOR ARMENOLOGICAL STUDIES OF THE NAS RA

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ШИРАКСКАЯ ОБЛАСТНАЯ БИБЛИОТЕКА
SHIRAK REGIONAL LIBRARY

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. ԳԹԱՍԻՐՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔ

Միջազգային գիտաժողով, 19 մայիսի, 2023, Գյումրի

АЛЕКСАНДРОПОЛЬ. ГОРОД МИЛОСЕРДИЯ

Международная научная конференция, 19 мая 2023 г., Гюмри

ALEXANDRAPOL: CITY OF MERCY

International conference, May 19, 2023, Gyumri

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Գ Յ Ո Ւ Մ Ր Ի
2 0 2 3

ԱԴԱՄՅԱՆ Նինետա (Երևան, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Հայցորդ
e-mail: ninettadamyan@gmail.com

ԴՐՎԱԳՆԵՐ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

ԿՀԲԸ-ն իր առաջին մասնաճյուղերից մեկը բացվել է Ալեքսանդրապոլում 1884 թ. մարտի 15-ին: Այն իր կանոնավոր գործունեությունը սկսեց 1890 թ. օգոստոսի 19-ից: Մասնաճյուղը գործունեության սկզբնական շրջանում զբաղվում էր բազմաբնույթ մշակութային-լուսավորական գործունեությամբ՝ նպաստներ էր տրամադրում դպրոցներին, ամսավճարներ՝ չքավոր աշակերտներին, բացում էր գրադարան-ընթերցարաններ, զբաղվում աղքատախնամ գործունեությամբ, ինչպես նաև՝ օգնություն ցուցաբերում տարերային աղետներից տուժածներին:

Առաջին աշխարհամարտի տարիներին ԿՀԲԸ-ն Ալեքսանդրապոլի մասնաճյուղը հսկայական աշխատանք կատարեց գաղթական-փախստականների տեղավորման և ապրուստի տարրական պայմաններով ապահովման ուղղությամբ: Մասնաճյուղը աչքի ընկավ նաև որբախնամ գործունեությամբ: 1915–1917 թթ. ԿՀԲԸ-ն Ալեքսանդրապոլում բացեց 8 որբանոց, ապաստան տրամադրելով ավելի քան 500 արևմտահայ որբերի: ԿՀԲԸ-ի ենթակայության տակ անցան նաև հասարակական այլ կազմակերպությունների կողմից բացված որբանոցները: Այդ թվում նաև երկուսը «Եղբայրական օգնության» կոմիտեից: Ընկերության Ալեքսանդրապոլի մասնաճյուղի գործունեության մասին կա հարուստ արխիվային նյութ, հրապարակի վրա են տարեկան տեղեկագրերը, լիազորների հաշվետվությունները և ժամանակի մամուլը:

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Կարինե (Գյումրի, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Պատմական գիտությունների թեկնածու
e-mail: karineal@mail.ru

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՈՐԲԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1920-1921ԹԹ. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՌՆԱԶԱՎԹՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1920թ. սեպտեմբերին արշավելով Արևելյան Հայաստան թուրքերը շարունակեցին հայ ժողովրդի բնաջնջման իրենց հրեշավոր ծրագիրը՝ ոչնչացնելով նաև այստեղ ապաստանած մեծ թվով արևմտահայ գաղթականների և որբերի:

1920թ. նոյեմբերին գրավելով և մինչև 1921թ. ապրիլը ռազմակալելով Ալեքսանդրապոլի գավառը, թուրքերը մի կողմից դրդում են Ալեքսանդրապոլում իրենց կողմից ստեղծված խորհրդային իշխանությանը՝ հեղկոմին թշնամական վերաբերմունք ցույց տալ Ամերկոմի ներկայացուցիչներին, մյուս կողմից վերջիններիս համոզում են որբերին տեղափոխել Կարս, որն իբր ավելի ապահով էր: Իրականում նպատակ ունեին վտանգավոր տեղափոխության ժամանակ սովի և համաճարակի միջոցով ոչնչացնել նրանց, ինչպես նաև տիրանալ սննդամթերքին: Իսկ 1921թ փետրվար-մարտին որբանոցների պաշարեղենը յուրացնելուց հետո վերջնագրով ստիպում են հետ վերադարձնել որբերին Կարսից Ալեքսանդրապոլ: Վստահ լինելով, որ բոլշևիկները վերաբերմունքի պատճառով ամերիկացիները կհեռանային Հայաստանից թուրքերը ձգտում էին սովի մատնել հազարավոր որբերի: Սակայն Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին օրերից, խորհրդահայ կառավարությունը հատուկ վերաբերմունք է ցուցաբերում Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի նկատմամբ, գիտակցելով, որ առանց նրանց օգնության հնարավոր չէ լուծել հազարավոր գաղթականների խնամատարության հարցը:

Մինչ թուքրերի հեռանալը ծայր աստիճան թշվառության մատնված գաղթականությանն ու որբերի խնդիրները փորձում է լուծել Ալեքսանդրապոլում ստեղծված իշխանության նոր ժամանակավոր մարմինը:

ԱՅՎԱԶՅԱՆ Գևորգ (Գյումրի, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Պատմական գիտությունների թեկնածու
e-mail: Ayg.84@mail.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ XIXԴ. 60-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ալեքսանդրապոլը հիմնադրումից ի վեր եղել է Հայաստանի գաղթականության խոշորագույն կենտրոնակայաններից մեկը: Այդ պատմական «բախտը» նրան ուղեկցել է մինչև 1920-ական թթ. կեսերը: Արևմտահայոց կյանքի գրեթե բոլոր օրհասական պահերին քաղաքը ընդունել և տեղավորել է հարյուրավոր վերաբնակ ընտանիքների: Հայրենակիցների նկատմամբ կարեկցանքը և հոգատարությունը հանդես են եկել որպես ալեքպոլցիների դիմագծի կարևոր տարրեր: Զեկուցումը հավաստելու է այդ հանգամանքը ի դեմս Ալեքսանդրապոլի «Որբախնամ» ընկերության և Սահականուշյան ձրիավարժ դպրոցի գործունեության:

ԱՎԱԳՅԱՆ Ինգա (Գյումրի, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
e-mail: inga.avagyan.76@mail.ru

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՆ ԸՍՏ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ

«Մեծ եղեռնը վերապրածները» մատենաշարում ընդգրկված հուշապատումներում մեծաթիվ են որբահավաքի, որբանոցների, որբախնամության մասին վկայությունները: Այս հիմնագույնի վրա ամենախոշոր և հեղինակավոր մասը բաժին է ընկնում Ամերկոմի որբախնամ գործունեությանը: Բացի Ալեքսանդրապոլում ծավալած երկարատև աշխատանքին, Ամերկոմը իր մասնաճյուղերն էր սփռել նաև Արևմտյան Հայաստանի հայաշատ վայրերում: Այսպիսի որբանոցներից էր Սվազի որբանոցը, որի մասին գրում է Քաջունի Ղարագյոզյանը իր հուշերում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կառավարությունը հանրությանը հանդարտեցնելու նպատակով հիմնադրում է որբանոցներ:

Ալեքսանդրապոլի Ամերկոմի որբանոցում է հանգրվանել Բիթլիսից մազապուրծ Միհրան Ղազարյանը: Կազաչի պոստի որբանոցում աշխատանքի էր մտել Հովհաննես Թոչունյան-Հովհաննիսյանը, ով նախ հանգրվանել էր Երզնկայի, ապա Էրզրումի որբանոցներում: Հուշագիրները հուշապատումներում խոր երախտագիտություն են հայտնում միսիոներներին, որբանոցում աշխատող բժիշկներին, դաստիարակներին,

ուսուցիչներին: Խստաբարո դաստիարակությունը, որ հայ որբերը ստանում էին Ամերկոմի որբանոցներում կարևոր էր, այնքանով որ այս մանուկները դարձան Խորհրդային Լենինականի բարեկիրթ հասարակության հիմքը: Այսօր Ամերկոմի որբանոցների շենքերը դեռ կանգում են Գյումրիում, դրանք լուռ վկաներն են այն ժամանակաշրջանի, երբ Ալեսանդրապոլը ավելի քան մեկ տասնամյակ միակ գթասրտության քաղաքն էր աշխարհում:

ԲՈՅԱՋՅԱՆ Արտաշես (Գյումրի, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի պետական համալսարան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
e-mail: a.boyajyan@mail.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՈՐԲԵՐԻ ԹՎԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ (1920-1928թթ.)

Արևմտյան և Արևելյան Հայաստանում 1914-1921թթ. թուրքական կառավարության կողմից կազմակերպված հայերի, հույների, ասորիների և այլ ազգությունների ցեղասպանության ժամանակ հարյուր հազարավոր երեխաներ որբացան: 1915թ.-ից անապաստան երեխաների համար բացվում են որբանոցներ Կարսում, իսկ թուրքական բանակի գրավումից հետո, այդ քաղաքի որբերը տեղափոխվում են Ալեքսանդրապոլ քաղաք: Որբանոցներ են բացվել նաև Սիրիայում, Հունաստանում, Ռումինիայում և այլ երկրներում: 1915-1916 թթ. ամերիկացի և ֆրանսիացի միսիոներները թուրքական գերությունից ազատել են 814.000 հայ երեխաների և նրանց տեղավորել աշխարհի ավելի քան 70 երկրների հատուկ մանկատներում: Առաջին որբանոցն Ալեքսանդրապոլ քաղաքում՝ գործող մի քանի բարեգործական ընկերությունների և կազմակերպությունների կողմից բացվում է 1915թ. նոյեմբերի 20-ին: Այդ աշխատանքներին մեծ օժանդակություն է ցուցաբերել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ը:

Գաղթականների թվի աճով պայմանավորված ավելացել է նաև որբ երեխաների թիվը: 1919 թ. Ալեքսանդրապոլի քաղաքագլխի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցն ստանձնեց քաղաքի հայ որբերի խնամքը: 1920թ. Ամերկոմի միայն «Պոլիգոն», «Կազաչի պոստ» և «Սևերսկի» զորամասերում տեղավորվել էին 20 հազար որբ: Ամերիկյան կառավարությունը նպատակ է հետապնդել լավագույն սաներին տեղափոխել ԱՄՆ: Որբերի առաջին խմբաքանակը տեղափոխվում է 1922թ.: Հետագայում այս գործընթացը կասեցվում է Ալեքսանդր Մյասնիկյանի պահանջով և երեխաների տեղափոխումը դադարեցվում է: Մինչ օրս հայտնի չէ, թե ինչքան որբեր են տարվել ԱՄՆ: Նշենք, որ 1920թ.համեմատ որբերի թիվը պակասել է 14999-ով կամ 3.6 անգամ: 1927թ. հունվարի 1-ի դրությամբ Լենինականի (նախկին Ալեքսանդրապոլ քաղաք) Ամերկոմի մանկատներում եղել են 5501 որբ, իսկ

մեկ տարի անց՝ 3125: Մանկատների սաների թվի նվազումը պայմանավորված է նրանով, որ 361-ը տեղավորվել են աշխատանքի Լենինականի տեքստիլ կոմբինատում, 578-ը տեղափոխվել են ՀԽՍՀ այլ գավառներ, 113-ը՝ Վրաստան, 17-ը՝ Ադրբեջան, 74-ը՝ Հյուսիսային Կովկաս և 533-ը՝ Սև ծովյան շրջաններ: Ամերկոմի գործունեությունը Լենինականում դադարեցվել է 1931թ.-ին:

ԻՆԳԵՐ Մարի (Վոլդա, Նորվեգիա)
Վոլդայի համալսարանական քոլեջ
Ph.D, Պրոֆեսոր
e-mail: imo@hivolda.no

ԼՈՒՅՍԻ ԱՂԲՅՈՒՐ. ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ 1922-1925 ԹԹ.

1922թ. բուժքույր, մանկաբարձուհի և միսիոներ Բոդիլ Բյորնը Ալեքսանդրապոլում (Լենինական/Գյումրի) հիմնել է մանկատուն: Բիորնը, ով Անատոլիա էր ժամանել 1905թ. գերմանական Deutscher Hülfsbund für christliches Liebeswerk im Orient միսիոներական կազմակերպության հետ, աշխատում էր նաև Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի (The Near East Relief (NER)) հետ: Նորվեգական մանկատունը, որը կոչվում է «Լույսի աղբյուրը» ֆինանսավորվում էր Նորվեգիայի մասնավոր միջոցների հաշվին: Դրա ծավալներն անհամեմատ փոքր էին ՄԱՆ-ի (NER)-ի մարդասիրական գործողության հետ: Այնուամենայնիվ, Biørn-ը նպատակ ուներ որբանոց ընդունված երեխաների համարի կյանքի որակը փոխել: Այս զեկույցը, որը հիմնված է Նորվեգիայի կանանց առաքելության կազմակերպության (Kvinnelige misjonsarbeidere, KMA) և ՄԱՆ-ի (NER) աղբյուրների վրա, կենտրոնանում է Բիորնի մարդասիրական աշխատանքի վրա Հայաստանի Հանրապետությունում 1922թ. մինչև խորհրդային իշխանությունների կողմից որբանոցի փակելը 1925 թ. :

Սկանդինավյան օգնության մյուս աշխատակիցների նման Բյորնը ցանկանում էր համատեղել միսիոներական կոչումը և մարդասիրական աշխատանքը Հայոց ցեղասպանությունը վերապրածների շրջանում: Բիորնը համոզված էր, որ Աստված ծրագիր ուներ ցեղասպանությունից փրկված հայ երեխաների համար, ինչպես նաև ծրագիր իր համար, որոնց կրոնական պարտականությունը օգնություն էր: Բյորնն օգտագործելու իր նախացեղասպանության և նոր, հետպատերազմյան ցանցերը ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Նորվեգիայում, վճռորոշ նշանակություն են ունեցել նրա աշխատանքի համար: Սա, ի լրումն նրա խորը կրոնականության, որը զուգորդվում էր բուժքույրական ոլորտում գիտական ուսուցման հետ, Բիորնին հաջողվեց ղեկավարել «Լույսի աղբյուրը»: 1920թ. -ի կեսերին խորհրդային իշխանություններն այլևս չհանդուրժեցին նորվեգական, քրիստոնեական հաստատությունը և խնդրեցին «Լույսի աղբյուրի» երեխաներին տեղափոխել ՄԱՆ (NER):

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Արմեն (Գյումրի, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
e-mail: a.hayrapetyan@shirakcenter.sci.am

ԴՐՎԱԳՆԵՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԾԱՎԱԼԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 1919-1920ԹԹ.

1919-1920թթ. Արևելյան Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող մի շարք հարցեր առայսօր կարոտ են լուրջ ուսումնասիրության: Սույն զեկույցի շրջանակներում ժամանակի պարբերական մամուլի հաղորդումների և հայտնաբերված նոր արխիվային փաստաթղթերի համադրմամբ առանձին հետազոտության առարկա ենք դարձել Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի 1919-1920թթ. Ալեքսանդրապոլում ծավալած գործունեությունը:

1918 թ. դեկտեմբերին սկսված հայ-վրացական կարճատև պատերազմից հետո Ալեքսանդրապոլի գավառը հայտնվեց սոցիալ-տնտեսական շատ ծանր իրավիճակում, որն անմիջապես ազդեց գաղթականության վիճակի վրա: Քաղաքը վերածվեց մուրացկանների բնակատեղիի: Քաղաքային իշխանությունների՝ գաղթականության վիճակը բարելավելու անկարողությունը շուտով հանգեցրեց զինված բախումների: Պարենամթերքի մատակարարման հարցերը կարգավորելու համար Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն (Ամերկոմ) փորձեց բոլոր գաղթականներին հավաքել ցարական բանակի նախկին զորանոցներում: Սակայն 30000 մարդու մեկ տեղում կենտրոնացնելը լուծում չէր: Ընդհակառակը՝ թշվառությունը հանգեցրեց բարքերի անկմանն ու հիվանդությունների տարածմանը: Ահռելի մասշտաբների հասան սովամահության դեպքերը: Դրությունը փոխվեց միայն 1920թ. գարնանը, երբ ՀՀ իշխանություններին հաջողվեց շուրջ 36.000 գաղթականների տեղավորել Կարսի և Ալեքսանդրապոլի դատարկված գյուղերում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հասմիկ (Գյումրի, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ
e-mail: hasmik.har@mail.ru

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ալեքսանդրապոլի մանկատներում գործել է ուրույն կրթական համակարգ, որը բխել է սաներին պատշաճ և առաջադեմ կրթական ծրագրերով ապահովելու անհրաժեշտությունից: Բավական է նշել «Դալտոն պլանի» դպրոցը, որը 1905 թ. ամերիկացի մանկավարժ Ելենա Պարկհերսթնի անհատական կրթական համակարգն էր՝ նպատակաուղղված սովորողի անհատական կարողությունները համակողմանի զարգացնելուն: Այս համակարգում ընդգրկված օժանդակ դասընթացներից մեկը երաժշտությունն էր, որտեղ ներառված էր բազմաբաղադրիչ առարկայական ծրագիր: Վերջինիս, և ընդհանրապես երաժշտության դասերին վերաբերող մեր դիտարկումները կատարել ենք արխիվային նյութերի և 1980-ական թվականներին մեր կողմից իրականացրած հավաքչական նյութերի հիման վրա:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հեղինե (Երևան, ՀՀ)
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ
e-mail: elline.hovhannisyan@mail.ru

ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԹԱՄՐՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔ ԱԼԵՔՄՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից հետո կարևորագույն խնդիրներից մեկը դա որբերին որբանոցներում տեղակայելու և հայկական միջավայր տեղափոխելու խնդիրն էր: Ստորև ներկայացվում է Վահան Չերազի գործունեությունը և նրա համագործակցությունը Մերձավորարևելյան նպաստամատույցի հետ: Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (Ամերկոմ) ստեղծվել է 1918թ. ԱՄՆ-ի կոնգրեսի որոշմամբ: Վահան Չերազը Ալեքսանդրապոլում աշխատել է Ամերիկյան օգնության կոմիտեում, զբաղվել հայ որբերի խնամակալությամբ, դաստիարակությամբ, ինչպես նաև կազմակերպել է սկաուտական և մարզական մանկապատանեկան խմբեր:

1919թ. Նպաստամատույցի ջանքերով Ալեքսանդրապոլի փողոցներից հավաքում էին թափառաշրջիկ հայ որբերին, որոնց բժշկական զննման ենթարկելուց հետո տեղավորում էին կա՛մ հիվանդանոցներում, կա՛մ որբանոցներում: Այս որբերից Չերազը ձևավորում էր իր խմբակները: Ալեքսանդրապոլի որբանոցներում երեխաները օրական երեք անգամ սնունդ էին ստանում, այն դեպքում, երբ նրանց թիվը շուրջ 25.000 էր: Սա մարդկության պատմության մեջ երբևիցե գոյություն ունեցած ամենամեծ որբանոցն էր և կոչվում էր «Որբաքաղաք»:

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մարիամ (Երևան, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Բանասիրական գիտությունների թեկնածու
e-mail: mariamhovsepian@mail.ru

ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ», «ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԵՎ «ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹԵՐԻ ԷՋԵՐՈՒՄ

«Ազատամարտ», «Վերջին լուր» և «Ժամանակ» օրաթերթերն անդրադարձել են հայ որբերի հիմնախնդիրներին: Այդ պարբերականները հրատարակվել են 20-րդ դարի առաջին կեսին Կ. Պոլսում: Լրագրողների ուշադրության կենտրոնում են եղել գաղթականների և ծնողազուրկ երեխաների կարիքները: Դրանց թվում էին կացարանի և կենցաղային անհրաժեշտության պարագաների, հագուստի և ուտելիքի բացակայությունը, առողջական խնդիրները: Որբերի համար ամենակարևոր խնդիրը նրանց ծնողազուրկ վիճակն էր: Նրանք սոված էին, հյուծված, անխնամ, անպաշտպան, անտուն: Թուրքերն ու քրդերը երեխաներին բռնի կրոնափոխ էին անում և ստրուկի կարգավիճակում պահում: Հայ ազգային և եկեղեցական կառույցները Մուդրոսի զինադադարից հետո որբերին տեղավորում են որբանոցներում: Փորձում են հոգալ նրանց խնդիրները, կազմակերպում են ուսումնական դասընթացներ: Վերոհիշյալ թերթերի աշխատակիցները ռեպորտաժներ էին պատրաստում և ներկայացնում էին այդ որբանոցներում երեխաների կեցության ու խնամքի պայմանները: Լրագրողներն օբյեկտիվ և անաչառ էին իրենց հրապարակումներում: Ոչինչ չթաքցնելով նրանք նշում էին որբանոցներում տարվող աշխատանքի դրական և բացասական կողմերը: Ցանկանում էին օգնել ցեղասպանության հետևանքով որբացած մանուկներին, որ տանելի լինեին նրանց կյանքի պայմանները:

ՄԱՆՈՒԿՅԱՆ Անի (Երևան, ՀՀ)
«Աջակիցներ» հ/կ
Մանկավարժական գիտությունների թեկնածու
e-mail: animanukyan75@gmail.com

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԻԵԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԲԵՐԻՆ ՈՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՄՆՈՒՆԴՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

1919-ից 1920 թթ. ՄԱՆ-ի գործունեությունն իրականացվում էի նույն կազմակերպության Կովկասյան մասնաճյուղի միջոցով: Գաղթականներին ու որբերին աջակցելու ծրագրերի համաձայն, առաջնային էր համարվում նրանց փրկելը համատարած սովից ու տարատեսակ հիվանդություններից: Հայաստանում մասնավորապես Ալեք-

սանդրապոլում ու Երևանում շատ էին գաղթականների կուտակումները, ուստի հնարավության սահմաններում բոլորին երեք անգամյա սնունդ էր բաժանվում ոչ միայն որբանոցներում, այլ նաև փողոցներում, վրաններում բնակվողներին՝ առաջնահերթությունը տալով որբերին, ապա գաղթական կանանց ու տղամարդկանց: Սննդի հարցերով զբաղվում էին որբանոցների ամերիկացի տնօրենները, ովքեր ամենայն խստությամբ պիտի հետևեին ՄԱՆ-ի կողմից մշակված սննդակարգին: Զեկոյցում կներկայացվի Ալեքսանդրապոլի Պոլիգոն, Կազաչի պոստ ու Սևերսկի որբանոցների սննդակարգերը, ինչպես նաև վերը նշված որբանոցներից մեկի տնօրենի որբանոցներում սննդի պաշարների մասին նկարագիրը:

ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ (Գյումրի, ՀՀ)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
բանասիրական գիտությունների թեկնածու
e-mail: hasvrej@mail.ru

ՈՐԲՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Իմ մանկության դառն հուշեր,
Ու ես ձեր մեջ որբ տղա,
Բայց ահա խոր մի գիշեր
Որբանոցից ես փախա…
Հովհաննես Շիրազ

Ալեքսանդրապոլում ծնված քնարերգուն՝ Հովհաննես Շիրազը, բազմաթիվ ստեղծագործությունների բովանդակային պլանում շեշտում է որբության թեման՝ անձնային դաշտից անցում կատարելով վերանձնային, համազգային մակարդակի: Զեկուցումն անդրադարձ է բանաստեղծի քնարական այն երկերին, որոնք արծարծում են որբության թեման:

Շիրազը որբանոցի պատկեր-նկարագիրը ուրվագծում է «Մի փետուր իմ արծիվ կյանքից» մանկությանը նվիրված պատումում, որը յուրօրինակ կենսապատում է. «Խուժանի որբանոցը» մեր խրճիթից լավ էր միայն նրանով, որ հաց ու խաշած լոբի կար, խաղ ու աղմուկ կար, վատ էր միայն նրանով, որ օրնիբուն մորս երեսը չէի տեսնում: …Դա Պոլիգոն կոչված որբանոցն էր, որ պիտի մանկության բողբոջից բացվեր պատանեկությանց ծաղիկը: Հիշում եմ այդ որբանոցի կյանքը, դա մահվան մի տեսիլ էր, չարչարանքի մի մթին շավիղ»:

Մեր ուսումնասիրության համատեքստում ուշագրավ է որբանոցի պատկերման զուգադրումը Նորա Ներսիսյանի «Որբաքաղաքը» գրքում՝ որբամանուկների դաստիարակության ու խնամքի հիշատակության առումով:

Հ. Շիրազի «Հորս խղճի ձայնը» երկում *որբ* բառը դառնում է արտահայտման կարևոր բառաիմաստային միավոր՝ մի դեպքում *որբ հոգիս* /անձնային տիրույթ/, մյուս դեպքում՝ համազգային /*որբ օրերում իմ ազգի*/.

Որբ բառամիավորն արտահայտում է նաև անպաշտպանություն, մենություն. բանաստեղծը հայրենիքը դիտում է որպես ծնող, իսկ հայրենիքից հեռու գտնվելը համարում է որբին համազոր:

Շիրակում տարածված խոսքերից է *մորից որբ* արտահայտությունը /էրեխեն մորից է որբ/. համանմանությամբ՝ զավակը մայր հայրենիքում է զգում պաշտպանված: Մեջբերենք Շիրազի «Նվեր Սփյուռքի Հայությանը» ստեղծագործությունից մի հատված.

Թե հայրենիքում մի խրճիթ չունես՝

Մոռացված որբ ես օտար լուսնի տակ:

Բանաստեղծի՝ որբանոցից փախչելու բուռն ցանկությունն արտահայտող պատկերը զուգադրաբար ուսումնասիրել ենք հեղինակի թե՛ արձակ (ահավասիկ՝ «Մի փետուր իմ արծիվ կյանքից»), թե՛ չափածո ստեղծագործություններում («Իմ մանկության դառը հուշեր») համապատկերում.

Թե՛ իրական, թե՛ գեղարվեստական միջավայրերում բանաստեղծը նույն պատկերն է հյուսում. որբի հոգեբանական վիճակի արտահայտությամբ գրված արձակ հուշապատում տեքստը նույնպես լի է գեղարվեստական խտությամբ ու պատկերավորման գունեղ միջոցներով /մի կաթիլ խնդություն, որ խմեցի այնտեղ/: արտահայտվում է բանաստեղծի հուշերում և չափածո գործերում:

ՄԱՐՏՈՅԱՆ Թեհմինե (Երևան, ՀՀ)
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ,
Ա. Մկրտչյանի անվ. Տնտեսաիրավագիտական համալսարան
Պատմական գիտությունների թեկնածու
e-mail: tehminemartoyan@gmail.com

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ՝ ՀԱՅ ՄԱՆԿԱՆՑ ԲՈՒՅՆ. ՎԱՀԱՆ ՉԵՐԱԶԻ ԲԱՐԵԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց ցեղասպանության հետևանքով հարյուր հազարավոր վերապրողներ ցրվել էին աշխարհով մեկ՝ մի կողմից՝ ավելացնելով վաղուց ի վեր գոյություն ունեցող գաղթավայրերի հայ բնակչության թվաքանակը, մյուս կողմից՝ ստեղծելով նոր գաղթավայրեր: Տասնյակ հազարավոր վերապրողներ ապաստանել էին նաև Հայաստանում, մասնավորապես Ալեքսանդրապոլում:

Զեկուցման նպատակը Հայոց ցեղասպանությունը վերապրած և Ալեքսանդրապոլում ապաստանած հայ մանուկների խնամակալության գործընթացի ներկայացումն է Վահան Չերազի անմիջական հոգածության ներքո: Քաղաքական բարդ իրողության պայմաններում Չերազի որբախնամ գործունեության քննությունը փորձ է ևս մեկ

առանցքային դերակատարի օրինակով փաստելու անհնարինը հնարավոր դարձնելու կարողությունը: Չերազի իմաստասիրական հայացքները նպատակ ունեին կերտելու իրական մարդուն, քաղաքացուն, հայրենասերին, առողջ մտածողությամբ օժտված ընտանիքի պատասխանատու անդամին: Չերազին մտահոգում էր իր սաների ոչ միայն ներկան, այլև ապագան՝ նրանց բարեկեցիկ ու ապահով կյանքը: Եվ դա ընդամենը մտահոգություն կամ դատարկ ցանկություն չէր: Չերազի բարոյական սկզբունքներն իրականում ուղի հարթեցին ոչ միայն Կազաչի պոստի իր սաների, այլև նրանց ժառանգների ու հետագա սերունդների համար: Եթե կային ժամանակներ, երբ Վահան Չերազի ու իր գործունեության մասին խոսելն անցանկալի և նույնիսկ վտանգավոր էր, ապա այսօր, բարեբախտաբար, նրա շունչը կա հատկապես Գյումրիում՝ Չերազի Ալեքսանդրապոլում, որ ոչ մի մայրաքաղաքի հետ չէր փոխի: Այսօր ուսուցիչը, իր աշակերտին ներկայացնելով Վահան Չերազի անցած ճանապարհը, կարող է կերտել իրական հերոսի կերպար. մեր օրերում անթույլատրելի և կործանարար է կերպարի ձևախեղումն ու խեղաթյուրումը ազգապահպանման, հավաքական կամքի գիտակցման տեսանկյունից:

ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ Շանթ (Նյու-Յորք, ԱՄՆ)
«Մերձավոր Արևելքի» հիմնադրամ
e-mail: szmardirossian@outlook.com

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵ: ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի պատմական ասոցիացիան կրթական նախաձեռնություն է Մերձավոր Արևելքի հիմնադրամին կից, որի առաքելությունն է պահպանել հարուստ արխիվը՝ փաստաթղթեր, լուսանկարներ, որոնք առնչվում եմ ՄԱՆ-ի կողմից իրականացված մարդասիրական օգնությունն ու աջակցությունը Հայոց մեծ եղեռնից փրկվածներին: Աննախադեպ առաքելությունն ամերիկյան ոչ-կառավարական միջազգային մարդասիրական օգնության առաջին դրսևորումն էր: